ՄԱԶԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մազական երևույթները տարածված են բնության մեջ, կիրառվում են տեխնիկայում, կենցաղում և կարևոր դեր են խաղում ամենատարբեր պրոցեսներում:

Բույսերի արմատներում, ցողուններում և տերևներում առկա մազանոթային համակարգի միջոցով ջուրը և սննդանյութերի ջրային լուծույթները թափանցում և տարածվում են բույսերում:

Ջուրը գետնի վերին շերտերն է բարձրանում մազականության շնորհիվ: Գետնի վերին շերտերից ջրի գոլորշացումը փոքրացնելու և խոնավությունը հողում պահելու նպատակով հողը վարում կամ ցաքանում են՝ քանդելով մազանոթների համակարգը:

Շինարարության մեջ օգտագործվող շինանյութերում (քար, աղյուս, բետոն, փայտ և այլն) կան բազմաթիվ մազանոթներ, որոնցով ջուրը շինության հիմքից բարձրանում է վեր՝ խոնավացնելով կառույցը: Ուստի՝ կառույցները խոնավությունից պաշտպանելու նպատակով կատարում են ջրամեկուսացում՝ նրանց հիմքերը պատելով տաք բիտումով, ջրամերժ ցեմենտով և այլ ջրամեկուսիչ նյութերով: